54. ԻՐԵԿ ԱԽԲԸՐՆԵՐ

Կէղնի, չէղնի իրեկ հատ տղա կէղնին, հ'իրարու ախպապ։ Էդ իրեկ լե իմանի չիփլախ կէղնին, հոգու նմուշ չկեր ուրանց փորու մեջ, քիսի մեջ ուրանց փարա ըտվաց բան խոնախ չըր էղներ, բըլե ուրանց քյալախուլախ տեխն էր։

Ավուրըմ մեկ՝ զատկի հ'իրկուն կէղնի։ Էդոնց ճեպ հինգ փարա չկեր։ Կմալուլին, զձեռք ուրանց կդնեն երսի ուրանց, կմնան։ Հ'իրարու կասեն. «Ջանըմ, հ'էսօր մըր զատիկն է, մըր տուն դարդակ, մըր ձեռք դարդակ, իմա՞լ էնեք»։

Էն մեկն կթռնի, կասե.—Ախբըրտանք, ջատ մարախ մ' էնեք, ձըր էս օրվա հ'իրկվա իտարեն վըր ընծիկ։

Միչնեկն կասե.—Ախբեր, էդա հ'իրիկվընե զատ մզիկ դրե իրեկ աղիզ օր լե կա, էդա իրեկ օր լե վըր ընծիկ։

Հ'ըմնուց պզտիկ լե կասե.— Ախբըրտանք, էդա մեկ քանի աղիզ օր թըղ հ'ընցնի, տարին տրսվերկու ամիս ձըր իտարեն վըր ընծիկ, մինակ տոնին ու զատկին խավըշմիշ ջըմ էղնի։

Էն տղեն օր ասեր էր զատկի հ'իրկուն վըր ընծիկ, կասե ախբըրտաց.—Դուք մանցեք հ'ոդա, ես էրթամ բանըմ առնիմ հ'իդամ, էսօր ուտինք, տեսնանք վաղ աստված ի՞նչ դուռ կբանա։

Կվերցու էրկու կուժ ու կէրթա։ Կէրթա հ'ախբուր, կիսնըվեր կլնա ջուր ու կառնե կէրթա մեխանեն։ Կասե.—Մեխանճի, հինգ-հինգ օխա ըռաղի բի, լից էդա կժերու մեջ։

Մեխանճին կէրթա, առանց բաղրի կառնե հինգ-հինգ օխա ըռաղի, վբերե կըլնա էդ կժերու մեջ։

Տղեն կասե.—Մեխանճի, գին ի՞նչ է։

Մեխանճին կասե.—Հոխեն հինգ խրոռշ է։

Մարդն է, կասե.— Հոխեն հարիր փարա կառնիմ, կիտաս՝ կառնիմ, չի տաս՝ չըմ առնի, դարդկե զքու ըռազին, կէրթամ ուրիշ տեղ կառնեմ։

Մեխանճին կդարդկե, կվերցու զուր կժներ, կէրթա ուրիշ մեխանե մը։—Մեխանճի, հինգ հոխա ըռազի լցու էդա կժներու մեջ, իտամ զքու փարեն։

Մեխանճին կբերե կըլնա, կասե.— Դեհ, զփարեն տուր։

Տղեն կասե.— Հոխեն քանի՞ խրոռշ է։

Մեխանճին կասե.— Չորս խրոռշ։

— Չըմ առնի, էրկու խրոռշ կիտաս կառնիմ, չիտաս՝ չըմ առնի։

Էդ տեսակով տաս տեխ կէրթա, զչուր կդառցու ըռազի, կվերցու կիգա շուկեն։

Կտեսնա օր տաճիկըմ դրեր է ուր հ՝առեջ հավ, ճետ ու խազ կծախե։

— Տաճիկ, էդա հավերու գին քանի՞ խրոռշ է։

— Թե հինգ, թե տաս խրոռշ,—կասե։

Կվերցու ամեկուց մեկ մեկ ջուխտ, օսկի մը լե ձեռքե փոխ կառնե, կասե.—Բան ու ման կառնիմ, կէրթամ տուն, կիտամ։

Տաճիկ բան չասե, կիտա։

Զուր գործ կտեսնա, կխըլըսի, լամկուն կասե.—Գինա՞ս, ես ֆլան տերտրու մշակն իմ, քելե էրթանք ժամ, առնեմ զքու փարեն, իտամ։

Լամուկ կէլնի կընկնի հ՝ետև, կիգա։ Ինկ կմտնի ժամ, լամուկ կկանի ժամու դուռ։

Կմտնի ներս, կէրթա տերտրուն կասե.—Տերտեր, ֆլան տաճիկ էկեր է, կհայենա,— ու մատով կցուցու զլամուկ, օր կանուկ է ժամու դուռ։

Տերտեր կասե.— Օրհնած, թըղ կանի հըմկա խոստովանաքի մեջ իմ, խոստովանաք խըլըսցում, թըղ հ՝իգա, զինկ հայեցում։

Տղեն կասե.—Չը կանի, օր հըմալ է, ձեռքով դու հըշմար էրե ուրեն, թըղ մնա հ՝ոնի, հաբ պարապիս։

Ինկ կէլնի լամկուն կասե.— Տերտեր ասեց՝ սապր թըղ էնե, հ՝ելնիմ իտամ զուր փարեն։

Կվերցու զուր հավերն ու կէրթա։

Տերտեր զուր խոստովանաք կխըլըսցու, կէրթա լամկուն կասե.— Արի զքզիկ հայեցում։

Լամուկն կասե.—Ի՞նչ հայեցնել է, ի՞նչ հալբաթ է, էդ տղեն հ՝իսնե էդա խրտար բան տարավ, ասեց՝ ես ֆլան տերտրու մշակն իմ, քելե էրթանք, առնեմ զքու փարեն իտամ։

27—915

Տերտեր կքերե զուր անկչի տակ, ինչ խրտար խոստովանաքի փարա կեր լրցուկ ճեպ էն խավլով օր հ՚ըմեն տասնոց, քսանոց ու քառասունոց էղնի, հանեց տվեց լամկուն, հեռեցուց ուր զոնեն զէդ շառ։

Կբերե էն հ՚իրկուն զախբրրգրրներ :աղեկրմ կկերցու, կխմցու։ Կպառկեն, քնեն կէլնին լուսմութ։

Կէլնին լուսմութ, միշինեկ ախբեր կասե.—Ախբրրտանք, էսօր դորն իմն է, հրմալ չէ՞։

Ախբրրտանք կասին։

Բրլե կասե օրթանճա ախբրրգիրն.—Ինչ օր կասեմ, իմ խոսքեն չէլնիք։

Ախբրրգրներ կասին.— Չէ։

Կէլնին կառնեն զիրար, կէրթան մեկ մեծ աշճիխանե մը, հ՚օգե մը կառնեն ու նստեն։

Իրեկ օր ուրանց խոլախբրմա կուտեն ու կխմեն։ Իրեկ օրն օր կթրմի, օրթանճա ախբրրգիրն կասե.—Կկանչեք զաշճու աշկերտ, ես հրսապ կտեսնամ, ես կթալեմ ձեռքս իմ ճեպ, դուք մը թողեք՝ ասեք մենք կիտանք, ես լե կասեմ՚ ախբրրտանք, հրմլա չէղնի, էկեք կապենք զաշկերտու աչքեր, մենե որ մեկս բռնեց, էնի թրղ իտա զփարեն։

Ախբրրտանք ասին.—Թրղ էղնի։

Կանչեցին զաշճու աշկերտ, ասին.—Մրր հրսապ-քիթապ ի՞նչ կէնե։

Աշկերտ ասեց.—Յավաշ, էրթամ ուստից հատկրնամ ու հ՚իգամ։

Գնաց, ուստից հարցուց, ասեց, թե հազար, թե հազար հինգ հարիր խրոոշ կէնե։ Էկավ ասեց։

Օրթանճա ախբրրդիր թալեց զձեռք ճեպ օր հաներ, իտեր, չէ՞ զիրար սովրրցուցած են, մեծ ախբերն ասեց՚ ես կիտամ, պզտիկ ախբերն ասեց՚ ես կիտամ։ Փաթրուտիմ դրին։ Օրթանճա ախբերն ասեց.—Ախբրրտանք, հ՚որի՞ զիրար կուտիք, էկեք կապինք զաշկերտու աչքեր, զոր մեկ օր բռնեց, էնի թրղ հանե իտա զփարեն։

Կապին զաշկերտու աչքեր, սրբեցին զբեխեր ուրանց, հ՚ելան գացին ուստից թամանա էղան, թողին գացին։

Ուստեն, դե իշքե աշկերտ հ՚իգա, դեհ իշքե աշկերտ հ՚իգա. տեսամ՚ օր հ՚անդրցավ, ինք հ՚ելավ, գնաց հ՚ետևեն, զդուռ բացեց, մտավ ներս, հ՚ուշիկրմ աշկերտ թալեց զձեռք, բռնեց, ասեց.—Էդա պետկ է իտա փարեն։

Ուստեն ասեց.—Հա՚, լաո, ես կիտամ, բան չրմ ասի, հեղրմ զքու աչքեր հարձկե, պատմե տեսնամ, էդ ի՞նչ օյին է հանած ին քու գլուխ։

Հարձկեց զաշկերտու աչքեր, իմալ օր մենք թարիֆ էրինք, հրմալ մեկիկ-մեկիկ թարիֆ էրեց զուր գլխու գալած ուստեն։

Ուստեն ասեց.—Լաո, բան չէղնի, էդ լե խելկրմ էր՝ սորվանք, զարկ Թըղ էրթա։

Ջատիկն օր հ'ընցուցին, պզտիկ ախբերն ասեց.—Դոր էկավ ընծիկ, ես խոսք չըմ տվե՞ր ի, օր զձիկ տարին տրսվերկու ամիս պահիմ, մինակ զատկից ու տոնից լախա չունիմ։

Ասին.—Հա։

— Օր հա, իմալ օր կէնիմ, իմ խոսքից դուրս պետկ չէ հ'ելնեք։

Ախբըրգըրներ ասին.—Քու խոսք վըր էդա պտղին ու վըր էդա աչից։

Հ'ելավ գնաց սար, տեսավ օր յապանի հովիվըմ, իսկի շահրստան չըր մտի, զուր օշխըրներ կարծըցու, բռնեց, առավ էկավ։

Առավ էկավ, առավ գնաց բաղնեկ, աղեկըմ համամլամիշ էրեց, առավ էկավ տուն։ Օր տուն բերեց.—Ախբըրտանք,—ասեց,—հանեք զձըր հալվըներ ու սահաթներ, տվեք ընծիկ, կտանեմ ծախեմ։

Չէ՞ օր հ'իրարու խոսք մեկ է, ախբըրտանք հանին տվին, առավ ղպզտիկ ախբըրգիրն ու գնաց։

Տարավ շուկեն, ծախեց, ձեռքըմ փաշի հալավ ու թուրըմ առավ, բերեց հագուց էդ հովվին ուր վերցին դրին գոշքի վրեն։

Թե ամիսըմ, թե էրկու զէդ հովիվ դուրս չհանին, դրին վըր դոշքին, բան օր սովրցուցին, սովրցուցին ասեր. «Փաք ալա, փաք ալա, յախըշոոռ»։

Հ'եր հովիվ աղեկըմ սորվավ, հ'ելան, առան գացին ջավահիրնոց։

Ջավահիրճին ասեց.—Ո՞ր գինա որ տեխու փաշեն է էկի, ալիշվերիշ կէնե, անճախ օր սրեն բերեր եմ, թալնեմ։ Գնաց քուռսի մը բերեց, դրեց հովիվի տակ, նստավ վրեն ու խուռուլմիշ էղավ, իրեկ ախբըրգըրներ լե բարև բռնին, կանան հ'առեշ ուրանց։

Հովիվն է, զուր խահվեն խմեց խըլըսավ, ախբըրգըրներ հ'ընկան ճավահիր ծախողի դուքնի մեջ, մեկ-մեկ վերցին, ցուցուցին հովվին, օր Հոյեա ուրանց մեծավորն է, էն լե ասեց. «Փաք ալա, փաք ալա, յախըշոր» ու դրին դասմըլի մեջ։

Ինչ գլուխդ ցավցում։ Դասմալըմ ճավահիր վերցին, սորա դառցան ճավահիրճուն ասին.—Բեկ ամր կէնե օր զէդա ճավահիրներ տանեք, ցուցունք խանումին, տեսնաք խանում լե կհավնի՞, դառնաք հ'իգանք, իտա զփարենն։

Ուրնե լե հարցուցին, ասեց. «Փակ ալաս», դաղի, բաղի մարդ, նը լեզու ունի, նը ֆարասաթ։

Ճավահիրճին ասեց.—Թըղ էղնի։

Հ'ելան իրեկ ախբըրգիրներ, առան զդասմալ ճավահիրն ու գացին, Հովիվ մնաց հոդ՝ խուռուլմիշ վըր աթոռքին։

Ճավահիրճին է, իշքեց դեհ մշկներ հ՝իգան, կեսօր հ՝ընցավ, էղավ հ՝իրկուն, աղեն մնաց էդտեխ նստուկ, չէկան։

Գիցավ էդ մարդ մեծ մարդ է, հ՝ելավ գնաց փաշին գանգտավ։

Փաշեն ճամբեց մարդ, առավ գնաց։ Հարցուց, ասեց.—Դու էդա մարդուց ճավահիրներ առեր իս, ճամբե քու տո՞ւն։

Ասեց.—Փաք ալա։

— Ո՞ր տարավ քու տուն։

— Փաք ալա, փաք ալա, յախըշոր։

— Քու տուն դո՞ր է։

— Փաք ալա, փաք ալա, յախըշոր։

Ասեց.—Տարեք զէդ մարդ, էրեք հաբս։

Տարան էրին ներսով ներս։

Թե օրըմ, թե էրկուս մնաց, ճամբեց առան էկան, ինչ օր հարցուց, ասեց. «Փաք ալա, փաք ալա, յախըշոր»։

Ասեց.—Ջանըմ, տյունեից բեխաբար մարդըմ, խաղ են խաղցած ճավահիրճու գլուխ, թողեք թըղ էրթա։

Թողին զհովիվ, գնաց ուր տուն։